

12/15/13

Quantum - Quantum

796

9-13

25 OCT 2010



Ռ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Դ Ե Պ Ի
Գ Ա Ռ Ն Ի - Գ Ե Ղ Ա Ր Դ

796
Գ-13

ՊԵՏՐՈՍ • 1935 • ՅԵՐԵՎԱՆ

3701

12 MAR 2013

Գառ. խմբագիր՝ Հով. Մելիքյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանյան
Սրբագրիչ Մ. Ալեքսանյան

◆
Գեոհրատի տպարան
Գլավիխ № 216. Գատիկեր № 783.
Հրատ. 3359. Տիրամ 2000



1369
37

ՅԵՐԵՎԱՆԻՑ ԳԱՌՆԻ

1934 թվի հունիս ամիսն եր: ՊՏԵԸ
Հայաստանի Հանրապետական խորհուրդը կազ-
մակերպեց փորձնական գիտահետազոտական
տուրխատական արշավ դեպի Գառնի և Գե-
ղարդ: Այդ վայրերը վաղուց գրավել ելին տու-
րխատներին, բայց այս ուղղութիամբ դեռ լավ
մարշրուտներ չկային:

Գառնիի, մանավանդ Գեղարդի բնության
գեղեցկությունների մասին շատ ելին խո-
սում, մանավանդ հետաքրքրում ելին շատերին
նրանց պատմական հնությունները:

Արշավախմբին միացան գիտական աշխա-
տավորներ— լեռկաբան, հողագետ, աշխարհա-
գետ, կենդանաբան, բիոլոգ, հնագետ. մասնակ-
ցում ելին տուրխատ ուսանողներ, վորոնցից լե-
րեքը բանֆակցիներ, նաև ակտիվիստ տուրխատ-

բանվորներ: Հայկինոն ել ավեց մի փոքրիկ կի-
նորրիզադա:

Նախագծովեց հետևյալ մարշրուտը. 1. Յերե-
վան—Շորբուլախ, Ավդալյար, Կուրբաղլու, Գառ-
նի: 2. Գառնիից ամենափրկչի ավերակների մո-
տով դեպի Գեղարդ: 3. Գեղարդից—Գողթ(վերին),
Գառնի, Քյարփիչլու, Ոխչաբերդ, Զրվեժ, Յերե-
վան:

Արշավախումբը գլխավորում ելին ընդհա-
նուր ղեկավար՝ յերկու ոգնականներով—սնտե-
սական, վարչական: Թեև բոլոր մասնակցողները
կազմում ելին մի կոլլեկտիվ, բայց նա մի քիչ
խայտաբղետ եր, կային մի քանի պատահական
սուրբիստներ:

Մշակվեցին աշխատանքի պլան, ժամանակի
բեժիմ, դիսցիպլինայի կանոնները:

Նախապատրաստական բոլոր աշխատանք-
ներն ավարտելուց հետո, նշանակված ժամին՝ ժամ
3-ին (ճաշին) տուրխտները ճանապարհ ընկան:
Տուրխտների իրերը, սննդի պաշարեղենը բարձ-
վեցին հատուկ սալլի վրա, վորի ձին արդեն
սկզբից դիմացկունության տեսակետից մեծ
կասկածներ հարուցեց և իսկապես այդպես ել
դուրս լեկավ՝ նա չարդարացրեց մեր սպասելիք-
ները, կարողութունները սալլապանի կողմից
չատ ելին չափազանցրած:

—Ձին չի դիմանա—ասում ելին շատերը:
Կդիմանա, պնդում եր սալլապանը—նրա
նիհարությանը միք նայիլ, նա դեռ ավելի ծանր
բեռ կքաշի:

Մենք չառարկեցինք: Ուշ եր արդեն նոր
տրանսպորտի մասին մտածելը: Յեթե մենք սկզ-
բից լավ պատկերացնելինք, թե ինչ ճանապարհ-
ներով պիտի գնայինք, իհարկե ավելի պահանջ-
կոտ կլինեցինք տրանսպորտի նկատմամբ: Մեր
անցած մարշրուտի համար լավ տրանսպորտի
հարցը—կարեվոր և լուրջ հարց ե. յեղն ու յեղան
սալլն ավելի ելին համապատասխանում մեր
ճանապարհին: Իսկ յեթե ստիպված եք ձիուց
ոգտվել, ապա նա պիտի լինի ուժեղ, դիմաց-
կուն և սալլն ել քիչ բեռնավորված:

Ռազմական քայլվածքով շուտով դուրս յե-
կանք քաղաքից, անցանք Թոխմախան Գյուլի մո-
տով, ապա մոտեցանք ճանապարհի այն բարձր
կետին, վորտեղից պիտի իջնեցինք Շորբուլախ
տանող ճանապարհը: Քարահանքեր ելին այտեղ:

Այստեղ ունեցանք առաջին դադարը: Այս
բարձունքը հետաքրքիր եր այն տեսակետից, վոր
այտեղ-մոտավոր և հեռավոր շրջապատի բնու-
թյան որեկանները մի շարք զրույցների նյութ
կարող են ծառայել: Մեր առաջ դեպի հարավ
պատկերացավ Կովկասյան լեռնաշղթան՝ սկսած

մեծ և փոքր Արարատներից. Շորբուլախի ուղ-
ղությամբ, ճանապարհի աջ (դեպի Ոխչաբերդ)
և ձախ կողմերում չերևում ելին լեռնային հնա-
դարյան ծալքավորման հետքերը—ապառների
թեք ուղղված շերտերը՝ վերևից կտրված: Այս-
տեղ տեղի լեն ունեցել վաղեմի անցյալում լեռ-
նակազմութան վիթխարի պրոցեսներ—լերկրա-
կեղևի շերտերի կծկումներ, ծալքավորումներ և
ապա նրանց քայքայման պրոցեսները՝ Ղրի, քա-
մու—մեխանիկական ներգործությամբ, Ղրի քի-
միական ներգործությամբ: Յերկրի մակերեսը փո-
խել է իր սկզբնական տեսքը: Թեք ընկած շեր-
տավոր ծալքերից պարզ չերևում էր, թե վոր-
քան ուժեղ, մեծ քայքայումներ են տեղի ունե-
ցել:

Յերկրաբանի, աշխարհագետի գրույցները
Հայաստանի լերկրաբանական անցյալի և ներ-
կալի մասին, լերկրի աշխարհագրական պայման-
ների, դիրքի մասին ավելի հետաքրքիր դար-
ձրին մեր առաջ ձգված, և հետագայում տեսած
լանդշաֆտները:

Հողագետն իր հերթին փոքրիկ գրույցով
բնույթագրեց Հայաստանի հողային պայմաններն
ընդհանրապես և մասնավորապես մեր ընտրած
մարշրուտի ուղղությամբ: Մեր շրջապատի քար-
քարոտ, չորային հողն ուներ յուրահատուկ բու-


սականություն: Կոնկրետ նմուշների վրա տու-
րիստի առաջ պատկերացավ, թե ինչպես տար-
բեր տեսակի բույսեր հարմարված են քարքարոտ,
չորային հողին: Այսպես կոչված չորասեր բույ-
սերը կամ փշեր ունեցին կամ ել ծածկված ելին
բազմաթիվ մազիկներով, չերբեմն այնքան շատ,
վոր բույսի կանաչ գույնը դիմակավորվում է: Հա-
վաքեցինք բույսերի նմուշներ: Շարժվեցինք
առաջ:

Ձառ ի վայր ճանապարհով մոտեցանք Շոր-
բուլախին: Դյուղը մեր ճանապարհից ձախ կողմի
վրա էր, բարձունքներում: Թեև ճանապարհը գնում
էր ներքեվից, մենք շեղվեցինք, ապա բարձրա-
ցանք դեպի գյուղ: Փոքրիկ գյուղ էր, բայց նրա
դիրքը բարձր էր, և այդտեղից ավելի մեծ հեռա-
նկար բացվեց մեր առաջ: Արարատյան հարթա-
վայրն ավելի լայն ծավալով բացվեց մեր ա-
ռաջ, ավելի հեռուն ձգվեց լեռնաշղթան, ավելի
մեծ տպավորություն թողեցին հոյակապ Արա-
րատն և նրա փոքր ընկերակիցը:

Դյուղում լավ աղբյուր կար: Ջրի ակունքը
գարգարված էր քանդակած քարերով, ապա լե-
տեից շարված ելին քարե ավազանները:

Շորբուլախի շրջակայքը բնագետ—բուսա-
բանի համար առանձնակի հետաքրքրություն է
ներկայացնում: Հանդիպում են բազմատեսակ

դաշտային բույսեր: Այս շրջանում հայտնաբերվել են Հայաստանի վայրի ցորենները: այս հանդամանքը հետաքրքրություն է առաջ բերել Խ. Միության բուսաբանների մեջ, նույնիսկ այստեղ լեկել եր հատուկ եքսպլիդիցիա ակադեմիկոս Վավիլովի գլխավորութեամբ, մեր բուսաբանների ղեկավարութեամբ: Տուրխատ—բուսաբանը պետք է լավ շրջի այս կողմերում, գուցե նոր—նոր հետաքրքիր բույսեր հայտաբերվեն:



Շորբուլաղ

Շորբուլախի մոտ, դեռ գյուղին չհասած կենդանաբանն իր աշխուժ, շարժուն բանֆակցի տուրխատների հետ հավաքեց բավականաչափ միջատներ. բռնեցին դաշտային թռչնագործի մի

տձ. փոքրիկ, նեղլիկ, բայց ուժեղ մկաններ ունեցող տձ եր, այսպես կոչված դաշտային ուղալն եր: Թե այդ ոձի, թե մի քանի մողեսների գունավորութիւնը լավ հարմարված եր հողի գույնին, յերբ նրանք անշարժանում ելին, հեռվից դժվար եր նրանց նկատել:

Շորբուլախի մոտ գգացվեց, թե վորչափ հարկավոր եր լուրջ մտածել տրանսպորտի մասին: Թեև սայլի ճանապարհ կա, բայց նա շարունակ բարձրանում է, տեղ—տեղ բավական կտրուկ, մանավանդ Շորբուլախից դեպի «յելը» կոչված կետը:

Այսպիսի ճանապարհների հարմար ամենահարմարն է յեզներով լծած սայլը, իսկ ձին, այն ել լղարիկ ձին, անկարող է ծանր բեռնած սայլը դուրս բերել մինչև ճանապարհի բարձր կետը: Այդպես ել պատահեց: Մեր ձին դեռ Շորբուլախ չհասած արդեն ցույց տվեց իր «արժանիքները», չդիմացավ: Ստիպված յեղանք յեզներով մի սայլ ևս վարձել, իրերի մի մասը տեղափոխել: Բայց այդ ել չողնեց: Յեզները հանդիստ ու առկուսութեամբ առաջ ելին քաշում ծանրացած սայլը մինչդեռ մեր ձին հրաժարվեց թեթևացրած սայլն անգամ մենակ հասցնել մինչև յելը:

Տուրխատների մի մասն արդեն առաջ եր գնացել և հասել «յելին»: Մյուս մասը յետ չեր

մնում սալից, ապա ստիպված յեղավ գալ ոգ-
նության ձիուն: Տուրիստները նույնպես «լրծ-
վեցին» սալին: Ընդհանուր ուժերով՝ վոմանք
—կողքից, վոմանք—անիվները հրելով՝ մի կերպ
արագացրին մեր ընթացքը: Սալապանը գերա-
դասեց նստել սալի վրա, վոր «ղեկավարի» իբր
անհաջող տրանսպորտը. աշխարհագետ—տու-
րիստը բռնեց ձիու սանձը և ավելի մեծ հաջողու-
թյամբ քան սալապանը կարողացավ «համոզել»
ձիուն, վոր նա հաղթահարի իբր ուժերից վեր
աշխատանքը: Հարվածային տեմպով տուրիստ-
ներն ուղղակի իրանց ուսերի վրա դուրս բերե-
ցին մինչև լեռ—սալը, ձիուն և սալապանին:
Այդ անսպասելի դիպվածը թեև շատ դանդա-
ղեցրեց մեր յերթը և չորրորդին խախտեց ժա-
մանակի մշակված բեժիմը և վորոշ «տուրիստ-
ների» մեջ «յետ նահանջելու» ցանկություններ
զարթեցրեց, բայց ճնշող մեծամասնությունը
ավելի աշխուժացավ, անսպասելի ֆիզիկուլու-
րան բարձրացրեց նրանց տրամադրությունը:

—Տուրիստը, այն էլ պրոլետտուրիստն
ամեն անակնկալ դիպված պետք է հանգիստ և
սառնասիրտ դիմավորի—այսպես էր մտածում
խսկական տուրիստը:

Այն, ինչ վոր քչերին վհատեցրեց, ընդ-
հակառակը, շատերին քաջալերեց: Այդպիսի դեպ-

քերում խոշոր նշանակութուն ունի սերտ կապ-
ված տուրիստական կոլեկտիվը:

Այնուամենայնիվ մեր ժամանակը խախտ-
վեց: Մենք համոզվեցինք, վոր Շորբուլախից
դեպի Ավդալար տանող ճանապարհը ամենա-
դժվարն էր:

Արդեն մութն ընկել էր, յերբ արշավախումբը
մոտենում էր Աբգալյարին: Մեկ տեղ պետք է
անցնելինք գետակով, բայց կամուրջը քանդված
էր, սալով անցնելն անհնար էր: Մեծ դժվարու-
թյուններով ճահճոտ խրամատի վրայով մի կերպ
տուրիստների շանքերով սալը դուրս բերեցինք
Աբգալյարի բարձունքները:

Կես գիշեր էր: Գյուղը քնած էր: Մեզ հան-
դիպեցին առաջին հերթին գյուղի շներն իրանց
կատաղի հաջոցով, ապա հատ—հատ մարդիկ էլ
երևացին:

Մտանք գյուղը:

Մեր ծրագրից դուրս ունեցած ֆիզիկուլու-
րան շատերի մեջ ծարավ էր առաջ բերել: Տուրիստ-
ներից վոմանք վազեցին դեպի աղբուրը, վո-
մանք էլ ջրին գերադասեցին լավ սառը համեղ
թանր: Թանի սիրահարները մտնելով պատահա-
կան բակը, զարթեցրին մարդկանց: Յերկար
չսպասեցին թանին: Թանը զվարթացրեց և նրանց,
վորոնք հոգնել էին և նույնիսկ մտադրու-

թյուն ունեցին գյուղում գիշերելու: Բայց միաք
չուներ փակ սենյակներում գիշերելու. գերա-
դասեցինք բաց, թարմ ողում քայլել, գնալ առաջ:

Հոգնածներին առաջարկվեց նստել սալ,
հենց նրա վրա լեւ քնել, հանգստանալ:

Քչերն ոգավեցին այդ առաջարկից:

Խավար գիշերը շուտով լուսավորվեց: Ամ-
պերը բացվեցին. դուրս լեկավ լուսինը և սու-
բիստները հոգնածությունն անցավ: Լուսը բոլո-
րին աշխուժացրեց:

Մեր ձին բոլորովին ուժասպառ եր լեղել:
Նրան ազատեցինք և փոխարինեցինք լեզներով:
Բայց ձին այնուամենայնիվ բոլորովին չազատ-
վեց, նրա վրա բազմեց իր տերը, սալապանը:

Կես գիշերն ել անցավ: Առավոտվա ժամը
4-ին մոտ եր, լերը նորից լավեցին շները հա-
ջոցներ: Մոտեցել ենք Գառնի գյուղին: Ահա
մտանք քնած գյուղը: Այն ճանապարհը, վոր
հնարավոր եր անցնել հինգ, վեց ժամում մենք
անցանք 12 ժամում: Միակիսանգարող հանգա-
մանքը—մեր լերթը շատ անգամ դանդաղեցնող
տրանսպորտն եր:

Գառնին մարշրուտի հիմնական բազան եր:
գիշերեցինք դպրոցում: Տուրխտաների դիմավո-
րումը լավ նախապատրաստված չեր: Գիշերելու
հնարավորությունները շատ սահմանափակ

եյին: Մեր տրամադրության տակեյին լերկու-
դասարաններ իրանց սեղաններով: Վոմանք
գերադասեցին գիշերել անմիջապես դրսում:

Գ Ե Պ Ի Գ Ե Ղ Ա Ր Դ

Վորոշված եր Գառնիի դիտումը թողնել
վերադարձին:

Առավոտ ժամը 7 ին ճանապարհ ընկանք
դեպի Գեղարդ: Ընտրեցինք դժվար, բայց հե-
տաքրքիր մարշրուտը, վորը անցնում եր ամենա-
փրկչի ավերակների մոտով: Գերադասեցինք դժ-
վար ճանապարհով գնա, իսկ հեշտ մարշրուտով
վերադառնալ: Սալ վերցնելն իմաստ չուներ,
լերկար ժամանակով չեյինք գնում, բացի այդ
մեր մարշրուտը—սալի ճանապարհ չեր: Ամեն-
վոք վերցրեց իր հետ ամենաանհրաժեշտ իրերը:
Մեր ընտրած ճանապարհով կարող եր միայն
եշն անցնել:

Գյուղից դուրս լեկանք: Քարքարոտ ճանա-
պարհով, ժառակույտների միջով իջանք Գեղարդ
գետի ձորը: Նեղ քարքարոտ կածանով հասանք
գետափը: Գետի վրայով ձգված եր քարաշեն
կամուրջը: Չորն այնքան հոյակապ եր ու-
տպավորիչ, վոր փոքրիկ դադար արինք: Կամուր-
ջից դեպի ներքև, գետի լերկու ափերին մանա-
վանդ աջ, թափթփված եյին քառսյին վիճակում

բազալտի սյուների բեկորները: Աջ ափը մինչև վերև կաղմված երբազալտի լեռկար քառակուսի



Բազալտի սյունաուսի:

սյուներից: Սյունազարդ բնագալտի պաար տեղ-տեղ ճեղքվածները եր տվել. ներքևում բազալ-

տրն այնքան ե քայքայվել, վոր գոյացել ե մի քարալը, վորի հատակը, ապա նաև դեպի գետը թեքվող ափն ամբողջովին ծածկված եր բազալտի մանր ու խոշոր կտորներով: Բազալտը միայն այստեղ չեր: Հեովում, ձորի խորքում նույնպես նշմարվում եյին բազալտի ուղղահայաց սյուները:


Ինչքան՝ հետաքրքիր տեղ եր լեռկարբանական և բնագետ—տուրիստի համար: Այս ապառաժների մեջ չեր կարելի չխոսել անցած վաղեմի ժամանակների վիթխարի հրաբխային ժայթքումների սոսկալի որերի մասին, չերբ Հայաստանի այս մասերը հեղեղվել են լավային հոսանքով. ինչքան՝ դարեր՝ հազարավոր դարեր պիտի անցնեյին, մինչև վոր այս գետի ձորը գոյանար: Բազալտը լավային ծածկոցը դանդաղ, դարավոր քայքայումների լեռնաբեկվելով՝ ջրի քայքայիչ աշխատանքի ազդեցութամբ, ուժեղ քամիների գրոհի տակ՝ քայքայվելով՝ ճեղքվել, բացվել ե, տեղ տվել հորդառատ լեռնային հեղեղներին, ջրերին, գետերին: Կիրճը քանի գնացել խորացել ու խորացել եր:

Կանգ առ մի ըուպե կամուրջի վրա և մի հայացք ձգիր դեպի գետափը, նայիր նրա հոսանքին դեպի ներքև և դեպի վեր. . . տպավորութլունն անմոռանալի լե: Նկարիչի աչքից այս տեսեսարանը չպիտի վրիպի. բազալտե սյունաշարքը

պահանջում ե, վոր նրան հավերժացնեն կտավի վրա:

Գեան ուներ խոր տեղեր, վորտեղ համեմատաբար շուրն ավելի հանգիստ եր: Կարելի չէ սառը ջրերում մարմինը զովացնել:

Մենք շտապում ելինք: Անցանք կամուրջը: Սկսեցինք բարձրանալ, սկզբում լալն, եր ճանապարհը, սալի ճանապարհ եր, մենք շուտով անցանք նեղ կածանի վրա, վոր ձգված եր լեռների թեք լանջին: Ավելի ու ավելի ելինք բարձրանում:



Տեսարան Գառնիից՝ Գեղարդի ուղղությամբ:

Գեղարդի գետի հովիտը մինչև Գեղարդաձորը միշտ մեր առաջ եր: Հեռվում լավ լերևում

եյին Գեղարդի ձորը, ապա նրանից վերև ձյունապատ լեռները:

Մեր բուսաբաները և ճենդանաբանները աշխուժացան: Բազմաթիվ միջատներ հավիտյան հրաժեշտ տվին գեղեցիկ բնության և հավերժական քնի, ապա և մահվան դատապարտվեցին՝ նրանց վորսացող լերեք աշխուժ, միշտ լեռուն բանֆակցի ուսանողների ձեռքում պահած մեռցրնող սրվակներում: Ինչքան ել նրանք չեյին ճգնում շատ «վորս» ունենալ, բայց ելին նրանց չեր հաջողվում մասնագետ—կենդանաբանի առաջը կտրել. վերջինիս սրվակները շատ արագ լցվում եյին բազմատեսակ միջատներով: Տուրիստ բանֆակցիներին կանդանաբանը շարունակ «վորակավորում եր», իր ցուցումներով պատրաստում եր ապագա գիտա—հետազոտող տուրիստ:

Մեր ուշադրութունը հեռվից գրավեցին վառ կարմիր, արնագույն ինչվոր անծանոթ խոշոր ծաղիկների մեկուսացած խմբերը: Իսկույն վրա հասան բուսասերները: Շատ հետաքրքիր բույս եր: Յերկար ծաղկեկոթը զուրկ եր տերևներից, մազոտ եր: Նրանց հանդիպում ելինք քարքարոտ տեղերում: Ալպյան Փլորալի խոշոր և գեղեցիկ ծաղիկներից եր արնագույն՝ Լեհկածաղիկ կոչված բույսը: Դեռ անցյալում՝ վաղուց նա գրավել եր ոտարերկրացի

1369
37



այն տուրխասներին, վորոնք պատել են Հայաստանի վայրերում: Վոչ միայն այստեղ է նա, այլ Հայաստանի ուրիշ տեղերում էլ հանդիպել են այս հազվագյուտ բույսը: Ոտարերկրացի ճամբորդները մեծ հիացմունքով են խոսում Լերկածաղիկի մասին: Անցյալում նրա շուրջը նույնիսկ հյուսվել են մի շարք ավանդույթուններ. այդ լերևում է նրանից, վոր բույսը մի քանի խորհրդավոր անուններ է կրում, որինակ, նրան տվել են հետևյալ անունները. «Աղբերաց արյուն ծաղիկ», «յոթ աղբոր արյուն», թուրքերեն. «գարդաշ-գանը», «շայթանլուլի» և այլն: Այժմյան գիտական անունն է. *Phelipaea cocciaea* ինչ վոր ֆրանսացի հին ծովապետի անունով *Phelipeaux*: Առաջին անգամ որան հայտաբերել է ճանապարհորդ Տուրնեֆորը: Նույն բույսն անվանվում էր նաև *Anoplandes Tournefortii* (Անոպլանտես Տուրնեֆորտի):

Հայաստանի ուրիշ տեղերում էլ կա այդ հազվագյուտ բույսը, բայց մեր տեսած վայրը չի հիշատակվում նույնիսկ Ալիշանի՝ «Հայբուսակը»: Մի ժամանակ, ինչպես ասում են վորոշ տվյալները, բույսը ծանոթ էր և գործածվում էր բժշկականույթյան մեջ որինակ՝ աչքի հիվանդույթյան դեմ, այս առթիվ, ինչպես նշում է Ալի-

շանը, վորոշ նկարագրույթուններ կան հին հայկական բժիշկ Մխիթար Հերացու մոտ:



Աղբերաց արյուն

Լերկածաղիկը պարագլխալին (մակաբույծ) բույս է, ապրում է ուրիշ բույսերի հաշվին: Նա չունի տերևներ (այստեղից և նրա անունը՝ անոպլանտես, լերկածաղիկ):

Արժե քրքրել արխիվները, ծանոթանալ և Հերացու տվյալներին՝ իմանալու համար, թե ինչով է նա գրավել ակնաբույթներին: Արժե հավաքել է նրա մասին լեղած այժմյան տեղե-

կուլթյունները, ապա և նրա շուրջը հյուսված
ավանդույթյունները:

Անցյալում ժողովրդական անզիր բանաս-
տեղծություններ ելին հորինվել այդ «հազվա-
գյուտ, զարմանալի բույսի» (ոտարազգի ճամբոր-
դի խոսքերից) մասին:

Բերենք մի նմուշ:

Այ իմ ազբերաց արուն
Որ բուսար ի մեջ քարերուն
Աչուիդ ի նարկիզ նման
Մեկն ի քուն մեկն դարթուն:

Այ իմ ազբերաց արուն
Ապառաժ քարը կենաս դուն
Աչերդ հւր նայի. նըման
Ոչ ի քուն ես և վոչ արթուն:

(Տես՝ Ալիշան. Հայբուսակք. էջ. 25)

Ա. Ռ. Ա. Ջ., Գ. Ե. Պ. Ի. Գ. Ե. Ղ. Ա. Ր. Գ.

Շուտով հասանք «ամենափրկչի» ավերակ-
ներին: Շատ գեղեցիկ դիրք ունենալ այս տեղը:
Այստեղ հանգիստ ունեցանք: Կինոթերիզացիան նը-
կարահանեց թե ավերակները և թե շրջապատի
բնական հարստությունները—լեռնաշղթաները,
գետի հովիտը մինչև Գեղարդի բարձունքնե-
րը: Հնագետի զբույցը մեզ ծանոթացրեց

ավերակների անցյալին նրանց ճարտագի-
տական արժեքներին: Ավերակները՝ յերկու-
կետում ամենաբարձր ելին, գեպի գետը
թեք ձգվող սարի գագաթին—լեկեղեցին էր,
կիսաքանդ, բայց այնքան պահպանված, վոր կա-
րելի չե վորոշ գաղափար կազմել նրա վոճի մա-
սին. իսկ ներքևում մի քանի շենքերի ավերակ-
ներ ելին, հիմնական մասից միայն պատերն են
մնացել, բայց հետաքրքիր քանդակներով. այս
մասի ավերակները ծածկվել են խիտ խոտային
և տնկային բուսականությամբ:

Մեր արշավախումբն ավերակների դիտու-
մից հետո բաժանվեց յերկու մասի: Մի մասը—
շտապեց առաջ, վոր շուտ հասնելով Գեղարդ՝
անմիջապես հոգար տուրիստների հանգստի և
սննդի կանոնավորման գործը մինչև բոլորի Գե-
ղարդ հասնելը: Մյուս, ավելի փոքր մասը, մի քիչ
սպասեց կինոթերիզացի նկարահանումների
պատճառով: Տեղն այնքան գրավիչ էր, մեր առաջ
բացված հեռանկարներն այնքան հետաքրքիր,
վոր կինոթերիզացիան չէր կարող կարճ ժամանա-
կամիջոցում ավարտել իր նկարահանումները:

Տուրիստների յերկրորդ խումբն էլ առաջ
գնաց: Վերջապես շարժվեց յերրորդ, ամենից
փոքր խումբը. այս խումբն սպասում էր կինո-
թերիզացիային. ճանապարհն արդեն բավական ծանր

եր: Թողնել կինորրիգադալին մենակ չեր կարելի: Թեև կինոսպարատուրան բարձրած եր համբերատար եղի վրա, բայց նեղ ու թեք կածանների վրա կարող եր եղն ել չգիմանալ ծանր ապարատների տակ, ուստի տուրխտաները անհրաժեշտ բոպելին անմիջապես պիտի ոգնության հասնելին կինորեժիտորին իր յերկու ոգնականներով:

Մեր ճանապարհը քանի գնում ավելի ու ավելի վեր եր գնում: Ամենառաջին խումբն ուղղություն եր վերցրել գեպի Ալի Մարզանլի թրքական պուղը-մեր ճանապարհի ամենաբարձր կետը, ապա այդտեղից ծրագրված եր իջնել ձորը—ուղիղ Գեղարզի դիմաց: Այս եր մեր սկզբնական մարշրուտը: Յերկրորդ խումբն ել գնաց նույն ուղղությամբ: Յերրորդ խումբն սկզբում նույն ուղղությունը բռնեց, բայց աննկատելի կերպով սա յերկու մասի բաժանվեց: Կինոբրիգադան համառ և արդեն հոգնած եղի պատճառով յետ մնաց: Շատ ծանր ճանապարհ եր, նեղ կածանը տեղ-տեղ շատ թեք եր, ձախ կողմում անդունդն եր սպառնում: Հիմնական մարշրուտավարը շատ եր առաջ անցել: Տուրխտաները ցրվել ելին շատ հեռու տարածության վրա: Վերջին քալողները չեյին լուսմարշրուտավարի սզդանշանը: Յերեք թե չորս

խումբ իրար կորցրած քալում եր առաջ ինքնուրույն հույս ունենալով վերջի վերջո հասնել Գեղարզ: Յեղանակը վատանում եր: Չորս կողմից հավաքվում ելին ամպերը: Մեր սկզբնական հաշվով արդեն վաղուց Գեղարդում պիտի լինելինք: Ուշացանք անձրևի տակ ել ընկանք: Կինոբրիգադան, վորը շատ եր յետ մնացել շուտով անցավ Ալի—Մարզանլի ուղղության վրա: Շեղվեց այդ մարշրուտից այն խումբը, վորի մեջ ելին յերկու գիտաշխատավորներ, յերեք բանֆակցի և մեկ համալսարանական ուսանողապագա աշխարհագետ, վորը մեկ տեղ հանդես գալով իր մի գլուղատնտեսական գրույցով, հավերժացրեց իր վրա, տուրխտաների կողմից իրեն պարգևատրված՝ «ազրոնումի» կոչումը:

Տողերիս գրողն ել այդ խմբումն եր: Չկարողացանք գտնել նախագծված մարշրուտը: Գնում ելինք նեղ, թեք և վտանգավոր կածանով: Չախ թևի վրա Գեղարզի գետի նեղ հովիտն եր: Մեկ տեղ մեր ուշադրությունը գրավեց շատ հետաքրքրական յերկրաբանական ոբյեկտ. գետի հովիտը մեջտեղից բաժանված եր յերկարությամբ ձգված կատարաձև բարձրունքով, վորի շատ թեք լանջը ուժեղ հողմահարման հետևանքով այնքան եր քայքայված, վոր բացվել ելին թեք ընկած նստվածքային ապառնների

յերկարածիզ շերտերը: Հոյակապ պատկեր էր: Յերկրաբան և առհասարակ բնագետ տուրխատնանալայման այս կողմով պիտի անցնի, նա պետք է տեսնի այս ուշագրավ որջեկտը: Յե՛վ շատ հավանական է, բացված շերտերի ուսումնասիրութիւնը յերևան հանի յեթե վոչ հանքեր, գեթ որդամնիզմների բրածոներ:

Բնասեր տուրխատ, անալայման անցիր այս կողմերով և յեթե հետախուզական նպատակներով ես յեկել, իջիր ձորը, հետագոտիր մերկացած նստվածքային ապառնների շերտերը:

Մեր փորձերը՝ գտնել իսկական մարշրուտը—ապարդչուն անցան: Առաջ գնալ անհնարին էր, շուտով դեմ ընկանք անդունդի, վեր բարձրանալ և ուղի բռնել Ալի—Մարդանյու վրա արդեն ուշ էր: Մենք աննկատելի իջել էլինք շատ ցած: Միակ յելքն էր—ավելի իջնել հասնել գետափին և գետով անցնել մյուս ափը: Ընկել էլինք ծառերի մեջ, այլևս ճանապարհի հետք էլ չէր յերևում: Մեր առաջ էր գետի մերկ, բարձրացող հակառակ ափը: Տեսնում էլինք և այն ճանապարհը, վորը Գողթ գլուղից գնում էր մի կողմից դեպի վեր՝ Գառնիի ուղղութիւնը, աջ կողմից քիչ իջնելով՝ գնում էր դեպի Գեղարդ:

Ինչ վոր սուրոցներ լսեցինք: Նայեցինք չորս կողմ, վոչ վոք չէր յերևում: Մեր ուշադ-

րութիւնը գրավեց Գեղարդի ճանապարհի վրա ինչ վոր սպիտակ ձիավոր: Մեզ մի քիչ զարմացրեց, թե ինչու ձին այս ու այն կողմն էր սլանում, մեկ էլ ձիավորը կանգ էր առնում և մեր կողմ նայում: Մենք լարեցինք մեր կոկորդները, ինչքան ուժ կար ձայն հանեցինք, ճիշտ այնպես, ինչպես փոթորիկի ընկած և ոգնութիւն սուրոցներ հնչեցող փորձանքի մատնված նավը:

Դրութիւնը նախանձելի չէր. մեզ մի բան էր սպառնում—անձրևի տակ լավ թրջվելը, մութ գիշերին թափառելը մինչ վոր մի կերպ կարողանանք՝ գետն անցնել, ապա կես գիշերին հասնել Գեղարդ: Այդ մտտավոր հեռանկարը տուրխատներիս չվհատեցրեց.

—Նը՛ ինչպես է տրամադրութիւնդ-հարցրեց զեկավարը բանֆակցիներին.

—Շատ, լավ, լազաթ ունի այսպիսի արկածալից ճամբորդութիւնը—ասացին նրանք:

Ուրախալի յեր տեսնել թե ինչպես հորդ անձրևից թրջված ուսանող տուրխատները կատակներով, ժայռից ժայռ ցատկոտելով՝ բոլորովին չվհատվեցին, դժգոհութիւն նշուլն անգամ չարտահայտեցին: Նրանք մոռանալով հոգնածութիւնը ուշադիր գննելով գետի հոսանքը անցնելու տեղ էլին վորոնում: Անվրդով էր և «ազրոնումը»:

Կամուրջի հետք անգամ չկար գետի վրա։ Գետափը հոգնեցնում էր մեզ իր մեծ-մեծ քարերով, ժայռակույտերով։ Գետը լայն էր, ջուրը առատ և ուժեղ հոսանքով, թեև գետի լայնությամբ այս ու այն տեղ ժայռեր ելին դուրս ցցված ջրի լեռեսին, բայց նրանք այնքան ելին հղկված, վոր վտաք զնեւ ու սահել նրանց վրալից անխուսափելի լեր։

Գնացինք գետի ուղղությամբ դեպի վեր։ Վորոշ տեղերում անմիջապես ջրի լեզրին ցցված մասերը խանգարում ելին, ստիպված ելինք, ելիցատկոտել ժայռակույտերի վրայով։ Անձրևը դադարել էր։

«Ազրոնոմը» հանկարծ կանգ առավ ինչ վոր տափակ ժայռի մոտ, կանչեց մեզ։ Մեր առաջ ժայռի վրա փռած էր մի մոխրագույն ոձ. նրա գույնն այնքան էր ձուլվել իր տակի ժայռի գուլնին, վոր սկզբում նրան լավ չնկատեցինք։ Թունավոր խոշոր ոձերից էր, իժն էր։ Կենդանաբանը մեզ հետ չէր, վոչ մի հնարավորություն չունեցինք նրան բռնելու և պահելու։ Մեր ադմուկից ոձն սթափվեց ու փախուստի դիմեց։ Այդ հանդիպումից հետո մենք արդեն մի քիչ զգուշ ելինք շարժվում, ուշադիր նայում ելինք քարերին։

Թե ինչքան մենք պիտի թափառելինք,

գժվար էր ասել։ Գետն անցնելու տեղ իհարկե կարելի լեր գտնել. բոլորս էլ արդեն պատրաստ ելինք վտաբռնիկ մտնել գետի սառը ջրերը ուրիշ հնար չկար։ Գնալ գետափով վերև միտք չունեք, միևնույն է, կամուրջ չեցինք հանդիպելու, իսկ շարունակ քարքարոտ գետափին լինելը վտանգավոր էր, ելի կհանդիպելինք ոձերի։

Տուրխտաներից մեկի պատճառով աշխատում ելինք գետն անցնելու համար ավելի անվտանգ ավելի հարմար տեղ գտնել։

Անպաստելի կերպով ոգնության հասավ այն սպիտակ ձիավորը, վորին գետափ իջնելիս մենք նկատեցինք Գեղարդի ճանապարհի վրա։

—Այդ սւր գնացիք,— զարմացած բացալ կանչեց նա, մեզ մոտենալով։ Յես քանի ժամ է հեռվից բոլորիդ էլ նշան ելի տալիս, վոր սխալ ճանապարհով եք գնում. տեսա ձեր արշավախումբի իրար կորցրած, տարբեր տեղերով գնացող մասերը։ Չեզ նշան ելի անում, վոր իջնեք գյուղի դիմաց, վորտեղ գետով կամուրջ էր ձգված. տեսա վոր մորթվել էք, մանավանդ ձեր փոքրիկ խումբը։

Ժամանակին հասավ. մեր ավելորդ թափառումներին վերջ տվեց։ Գեղարդի վարիչն էր։ Հտոակավոր, արդեն ալեգարդ, բայց լերիտա-

սարգական կորովն ու աշխուժությունը գեռևս լի լեր նրա մեջ: Գառնիում իմացել եր մեր արշավախմբի մասին այն ժամանակ, չերբ մենք արդեն շատ հեռու ելինք գյուղից. անմիջապես լետ եր դարձել լավ ճանապարհով, գոտի աջ ափով: Նա գողթ գյուղին հասնելով տեսավ մեզ, փորձեց հեռվից ազդանշաններ տալով հասկացնելով, վոր մենք անցնենք ավելի հարմար մարշրուտի վրա, բայց մենք նրան չհասկացանք:

Անմիջապես իր ձին տրամադրեց գետով անցնելու համար: Առաջին հերթին վարիչն անցկացրեց մեր ամենահոգնած ընկերոջ. բայց չերկրորդ անգամը ձին հրաժարվեց մտնել ջուրը, նա չլսեց իր տիրոջ և վոչ մի հորդորանքին: Ինչից վախեցավ ձին—գետի սառը ջրից, թե մինգրելական քեչու գլխարկից—չիմացանք, բայց համոզվեցինք, վոր բոլորիս համար անխուսափելի դարձավ այս կամ այն կերպ մեր վտոքերով գետն անցնելը: Ձեռքերն ազատ պահելու համար նախ կոշիկները գուլպաներով գցեցինք մյուս ափը:

Վերջապես ձեռք ձեռքի բռնած, փայտերով գետի հատակին հենվելով մի կերպ անցանք մյուս ափը: Իհարկե շատ թրջվեցինք: Մենակ մեկ հոգով անցնելը մի քիչ զժվար եր, մանավանդ, չեթե տուրիստն այնքան ել չերիտասարդ

չե. բայց և այնպես գետով անցնելը հնարավոր եր:

Համոզվեցինք, վոր մեր բոլորիս մարշրուտը սխալ եր նախագծված. անհրաժեշտ եր հենց Գողթ գյուղի ուղղությամբ իջնել գետափ, ապա անցնել գյուղի մոտ լեղած կամուրջով և լավ ճանապարհով ավելի կարճ ժամանակում հասնել Գեղարդ:

Արագաշարժ, թեթև բեռնավորված, արկածներից չվախեցող, առկուն տուրիստների համար իհարկե գրավիչ եր և այն մարշրուտը, վոր գնում եր Ալի—Մարզանալի, ապա իջնում, բայց մեր արշավախմբի համար, վորի հետ եր կինոբերիզադան և տարիքավոր տուրիստներ միակ լավ մարշրուտը—Գողթ գյուղի մոտի կամուրջի վրայով պիտի անցներ: Այլ մարշրուտներն անխուսափելիորեն պիտի բերեն գետափ և ստիպեն գետի սառը ջրերով անցնել: Սովորական տուրիստական խումբերի համար կայուն մարշրուտը պիտի անցնի կամուրջի վրայով: Իսկ Ալի-Մարզանալի ուղղությունը կթեթևանա այն դեպքում չեթե գետի վրայով վորևե տեղ թեկուզ հասարակ գերաններից պատրաստված կամուրջ լիներ: Դիմացկուն տուրիստների համար կարելի չե առաջարկել և այս ուղղությունը:

Գեղարդ հասանք դիշերը: Ամենից ուշ, հա-


մարչա կես գիշերին, հասավ կինոբրիգադան, վորի գծվարությունները կրկնապատկեցին ծանր ապարատուրան և յերկարականջ չորքոտանի տրանսպորտը, մեծ գծվարություններով, պարանի ոգնությամբ գետի վրայով մի կերպ անցկացրին թե՛ ծանր ապրանքները, թե եշին:

Չնայած արկածալից մեր յերթին, բարեբախտաբար ամեն ինչ լավ անցավ: Աչքի ընկան իրանց տոկոնությամբ մեր արշավախմբի տուրիստ կանայք, մանավանդ «ինտուրիստի» ներկայացուցչուհին:

ԳԵՂԱՐԴՈՒՄ

Քանի մոտենում ելինք Գեղարդին, այնքան ավելի ու ավելի հարուստ ու գեղեցիկ եր դառնում բնությունը: Ճանապարհի աջ կողմում գետի ձորն եր, նրա ձախ անտառապատ բարձր ափերը: Յերևում եր այն բարձր կետը—Ալի-Մարդանլի գյուղը, վորտեղից արդեն իջել, կամ նոր հասել են մեր խմբից առաջ գնացող տուրիստները: Թե գնում ելինք շարունակ անձրևի տակ բաց թարմ, զով ոգը, հրապուրիչ շրջապատը գվարթ և աշխուժ եր պահում մեր տրամադրությունը:

Հասանք Գեղարդ: Արդեն մութն ընկել եր:



Ստիպված լեղանք գիշերելու: Մեզ հետ մենք վոչ մի հարմարութուններ չեյինք բերել, քանի վոր չեյինք նախատեսել գիշերելը: Հակառակ մեր ցանկութեան, ճիշտ մարշրուտ չունենալու պատճառով ուշացանք: Իսկ մթնշաղին գիտել Գեղարդն ու լետ դառնալ միտք չուներ: Գեղարդի վարիչը մեզ անմիջապես տրամադրեց մաքսիմալ հարմարութունները, նույնիսկ իր սենյակը տրամադրեց: Հատկապես հյուրերի համար կային հատուկ սենյակներ, բայց վերանորոգման մեջ եյին, հարմարութուններ չունեյին. Ծրագրված է տուրիստների համար ունենալ հատուկ հանրակացարան իր բոլոր հարմարութուններով: Բայց առաջին հերթին Գեղարդը սպասարկելու է գիտաշխատավորներին, վորոնց համար, ինչպես իմացանք, Գեղարդը պիտի հանգստյան տան վերածվի: Կան բոլոր տվյալներն իսկապես լավ հանգստյան տուն լինելու համար:


Մեր տնտեսավարներն արդեն հողացել եյին ընթրիքի և թեյի մասին:

Յերբ վաղ առավոտյան սկսեցինք գիտել Գեղարդը և նրա շրջապատը, համոզվեցինք, վոր տուրիստն այստեղ լեթե վոչ մի քանի որ, այլ գեթ մի ամբողջ որ պետք է մնա: Տուրիստական արշավները չպետք է վերածվեն անընդհատ լեթի մի քանի կարճատև դադարներով.

մարշրուտի վորոշ կետերում անհրաժեշտ է մնա ամենաքիչը մեկ որ — թարմացման, հանգստյան, այսպես կոչված՝ լիցքի համար: Այդպիսի հանգստյան բազա պիտի հանդիսանա նաև Գեղարդը: Հարկավոր է գիտել վոչ միայն Գեղարդը, այլ այստեղից կարճատև եքսկուրսիաներ ունենալ նրա հարուստ, գեղեցիկ շրջակայքում: Ապա ուրեմն Գեղարդում պիտի լինի հարմարութուններ վոչ միայն գիշերելու համար, այլ և վորոշ հնարավորութուններ աննդի տեսակետից. վերջին հանգամանքը մանավանդ շատ կարևոր է, նկատի առնելով, վոր հանգստացող գիտաշխատավորը կմնա այստեղ շատ ավելի լերկար ժամանակով: Բոլոր տվյալները կան Գեղարդն որինակելի հանգստյան տուն դարձնելու համար: Կա լերկու հարկանի շենք, վերևի հարկում մի քանի սենյակներ կհարմարացվեն գիտաշխատավորի հանգստյան և աշխատանքի համար: Մնում և լավ կահավորել, բակը կուլտուրականացնել, ունենալ բանջարանոց, պտղատու ծառեր, կաթնաֆերմա, անասուններ, թռչուններ. — ահա այս ամենը Գեղարդը կդարձնի հրապուրիչ հանգստյան վայրերից մեկը: Վանքից վոչ այնքան հեռու կա ջրվեժ. թալա ուրեմն կարելի կլինի ողտազործել ջրի եներգիան հիդրոէլեկտրականի համար, — այս էլ եժան եներգիա կտա վոչ

միայն Գեղարդին այլ և շրջապատի մարդաբնակ վայրերը լուսավորելու համար:

Յերբ դուրս յեկանք բակի կողմի պատշգամբը մեր առաջ պատկերացան լեռան լանջին կպած, ուղղահայաց ցցված, իրար, կպած հողմահարված ապառնների լայն-լայն սյուները:



Հողմահարված սյուներ Գեղարդում:

Հնագիտական տեսակետից վանքը մեծ հետաքրքրութուն է ներկայացնում, նրա ճարտարագիտական ամբողջ կառուցվածքը, արվեստը: Վանքի վորոշ մասը փորված է ապառաժների մեջ, լեռան մեջ: Ներսից պատերը զարդարված են բավական բարդ քանդակներով: Մինչև քրիստոնեական Գեղարդավանքի հիմնեղն ապառաժների միջի այրերը փորված ելին դեռ հեթանոսական շրջանում. այդ ժամանակաշրջանում այրերը հարմարեցված ելին վորպես

հեթանոսական տաճար, չրի կուլտի տաճար: Գեղարդը կոչվում էր Այրիվանք: Քրիստոնեական շրջանից այրերը լայնացվում, հարմարեցվում են վորպես քրիստոնեական տաճար, դրսից ել ավելացնում են տաճարի նորակառույց մասերը: Շատ հետաքրքիր և նուրբ քանդակներով զարդարված է մանավանդ գլխավոր տաճարի մուտքը: Աչքի են ընկնում խաղողի վողկույզների քանդակները և թռչունների և անասունների բարեկեփները: Ուրեմն հնում այրերից մեկում այժմ ել դուրս յեկող աղբյուրը պաշտամունքի առարկա յեր: Այրիվանքն ել, ինչպես Հայաստանի մի շարք ուրիշ տեղերում, չրի կուլտի տաճարներից մեկն էր: Քրիստոնեյաները շարունակելով հեթանոսների գործը, Այրիվանքը վերածեցին Գեղարդավանքի, պահպանված աղբյուրն ել «սուրբ, հրաշագործ» հայտարարելով՝ շարունակեցին հեթանոս վանականների գործը, և մինչև վանականների արտաքսելը վանքից, կրոնականները շահագործում ելին «սրբավայրը», «հրաշագործ» Այրիվանքն ու նրա աղբյուրը: Վանքը դարձրել ելին ուխտատեղի, և պարագիտ վանականներն ապրում ելին ուխտավորների հաշվին, մառաններն ու գրպանները լցում նրանց մթերային և դրամական նվերաբերութուններով: Միայն խորհրդայ-

նացումից հետո, ժողովրդական զանգվածների աչքերը բացվեցին, խարդախ ու «հրաշագործ» վանականների դիմակը պատռվեց և վանքը մնաց վորպես մի պատմական հետաքրքիր հուշարձան անցյալի ճանտարագիտական արվեստը, վոճը ցուցաբերող:

Վանքում մնացել են կիսաշեն վիճակում վանականների և ուխտավորների խուցերը: Ինչպես լերևում ե վանահայրը մտադրություն ուներ ընդարձակելու վանքի «հրաշքների» առևտուրը, բայց անվերադարձ քշվեցին բոլոր հրաշագործները: Վանքը վերացվեց սնտեսություն իր հատուկ վարիչով: Վանականների կողմից փորձեր լեղան «հրաշքներով» վախեցնելու նոր մարդկանց, բայց նրանց բոլոր վոտնձգություններն իզուր անցան:

Գեղարդը — գիտաշխտավորների կենսական լիցքի համար ունի բոլոր ավալները: Գեղարդի ձոխ, բնությունը, թարմ, առողջ ոդը, պատմական հուշարձանները պիտի գրավեն ամեն մի տուրիստի:

Յերբ դուրս ենք գալիս վանքից և նայում ձորի ուղղությունը, նորից մեր առաջ ցցվում են հսկայական հողմահարված ապառների սյուների, ձևավորված զանգվածները: Յերկրաբանի, աշխարհագետի աչքից չպիտի վրիպեն այդ հողմահարմա սյուները:

Մեր ուղեցույցն եր Գեղարդի վարիչը: Նա տալիս եր մանրամասն բացատրություն թե՛ վանքի պատմության և թե՛ շրջապատի հետաքրքիր բնությունն ու բնականների մասին:

Յերբ հրաժեշտ տվինք Գեղարդին հետազանցած նեղ կածանով իջանք դեպի գետի ափը, այնտեղ ուր կար լերկաթաշրի աղբյուր: Աղբյուրի մոտ քարերը ծածկված ելին բարակ ժանգաշերտով. ջուրը սառը չեք, բայց խկական լերկաթաշրի համ ունեք: Այս աղբյուրի վրա ևս անհրաժեշտ կլինի հատուկ ուշադրություն դարձնել ուսումնասիրել նրա կարողությունը, նրա բուժարար արժանիքները: Ապա լայնացնելով ակունքը, պետք ե կարգի բերել ավազանը, կուտուրականացնել շրջապատը, անցկացնել հարմար ճանապարհ:

Գեղարդ գետի ձորում վարիչի ասելով կա և անխաթթվալին աղբյուր: Ժամանակ չունեցանք տեսնելու այդ աղբյուրը: Դրա համար պետք ե շեղվելինք ճանապարհից և գնալինք ավելինք և դեպի ձորը:

Վ Ե Ր Ա Գ Ա Ր Չ Գ Ե Պ Ի Գ Ա Ռ Ն Ի

Վերադարձի մարշրուտը ուրիշ ուղղություն ունեք: Այս այն ուղին ե, վորով հնարավոր ե Գառնիից գալ Գեղարդ՝ և, սայլով և նույնիսկ

ավտոյով, իհարկե և հեծանիվով: Լաջն, ընդար-
ձակ ճանապարհ եր, հարուստ դաշտային բու-
սականութեամբ: Այս մարջրուտը, բացի իր հար-
մար լինելուն, հետաքրքրական և այն տեսա-
կետից, վոր քո աչքի առաջ անցնում ե ձորի
հակառակ բարձր ափը, սկզբում անտառապատ,
ապա մերի: Մենք տեսանք այն վտանգավոր
բարձր կածանները, վորոնցով յերեկ արագ
տեմբով շտապում ելինք զեպի Գեղարդ, այստեղ
զգացինք, թե ինչպիսի վտանգավոր անդունդ-
ների վրայով եր տեղ-տեղ անցնում կածանը:

Դեռ շատ չհեռանալով Գեղարդից մենք հա-
կառակ ափի բարձունքներում տեսանք անմատ-
չելի ապառաժների վրա մի քանի քարայրներ,
մեզ ասացին, վոր Քյորոզլու քարայրներն ելին:

Բազմաթիվ և բազմազան ծաղիկները գրա-
վեցին բոլորիս, կային նրանց մեջ և, գեղարուչ-
սեր, և, մեղրաբույսեր: Կենդանաբանները ձիու-
աղբաբզեզների առատ բերք ունեցան:

Շուտով մոտեցանք վերին Գողթ գյուղին:
Մեր ճանապարհը գյուղի վերևով եր անցնում,
բայց մենք իջանք գյուղը՝ աղբյուրից շուր խմե-
լու համար:

Գողթից հետո գնում ելինք ուղիղ և մի քիչ
փոշոտ ճանապարհով: Չախ թևի վրա քարերի
մեջ մեկ տեղ բռնեցինք Կովկասյան ազամա

կոչված խոշոր մողեսին: Արտաքինով նա շատ
նման եր փոքրիկ կոկորդիլոսի. գլուխը տափակ,
լաջն, մարմինն ել—լաջն ամբողջովին բշտիկա-
վոր, իսկ պոչը փշավոր բշտիկներով: Սկզբում
նրան լավ չնկատեցինք, նա հանգիստ նստած
եր քարի վրա. նրա գույնը ձուլվել եր քարի
գույնին: Յետևից մի քիչ վազելով՝ գլխարկներս
վրան գցելով հաշոդվեց բռնել նրան:

Յերեք-չորս ժամում հասանք Գառնի: Մենք
գոհ ելինք, վոր Գառնիից-Գեղարդ գնացինք
ամենավրկչի ավերակների մոտով, այսինքն
Գեղարդ գետի ձախ ափով, իսկ վերագառնալու
համար անպայման պիտի ընտրել այժմյան
մարջրուտը:

Գ Ա Ռ Ն Ի

Ըստ նախնական պլանի մենք մեկ-յերկու
ժամ հանգստանալուց հետո պիտի մեկնեցինք
Յերևան. այդպես ելին տրամադրված և այն
աուրիստները, վորոնք շատ ելին շտապում:
Իհարկե այդպես անելն իմաստ չուներ: Գյու-
ղում հարկավոր եր լավ հանգստանալ, իսկ ամե-
նագլխավորը—ծանոթանալ գյուղին, նրա շրբ-
ջակայքին և մանավանդ նրա պատմական հնա-
գույն հուշարձաններին: Ամբողջ գյուղի զերբն
այնքան գեղեցիկ եր, բնությունն այնքան գրա-

վիչ եր, վոր չեր կարելի մի քանի ժամվա դիտողութեամբ բավականանալ:

Ամենից առաջ գնացինք դիտելու նշանավոր հուշարձանները: Գյուղի հարավային կողմում, ձորագլխին գտնվում էլին հին բերդաքաղաքի ավերակները:

Գնացինք այսպես. նախ գլուղի գլխավոր ճանապարհով, ապա շեղվեցինք դեպի ձախ, այնուհետև ուղղվեցինք դեպի ձորագլուխը. մտանք լայն ծառուղի, յերկու կողմից բարդենիններ, ընկուզենիններ էլին մինչև ավերակների գլխավոր մուտքը: Մուտքը մասամբ պահպանվել էր. հիմքը ամուր բազալտից էր, իսկ մնացած շարվածքը—տուֆից: Մուտքից դեպի ձախ տեղ-տեղ պահպանվել էլին ամրոցի հին պատերը:

Մուտքն անցանք. էլի գնացինք ծառուղիով, մինչև հասանք ավերակների կենտրոնական տեղը. չորս կողմ թափթված էլին հսկայական մշակված քարեր, —մնացորդներ էլին սյուների, պատերի. մեզ գրավեցին գեղեցիկ քանդակներով զարդարված քարերը: Ահա և փոքրիկ այն հրապարակը, վորի կենտրոնում հնադարյան տաճարի ավերակներն էլին:

Այս բերդաքաղաքի տեղը բավական անմատչելի չե. նա թերակղզու նման է. մի կողմից, հարավային ուղղութեամբ Ազատ գետի

ձորն է, մինչև 500 մետր խորութեամբ անդունդը, դեպի ձախ՝ բարձր ապառաժներն են, այս մասում տեղ տեղ ապառաժներին հաջորդում են կոտուցած պարիսպների մնացորդները: Յերբորդ կողմը, ամենից մատչելին՝ կապված էր անմիջապես գլուղի հետ. այս կողմում արդեն գլխավոր պարիսպներն էլին. նրանցից մնացել են աննշան բեկորներ. ամենից շատ պահպանվել էր քանդված դուռը:

Տաճարից լրիվ պահպանվել է նրա բարձր, ամուր հիմքը, չորս կողմ ընկած էլին քանդված տաճարի բեկորները—պատերի, ծածկի, սյուների: Շատերի վրա լավ պահպանվել են քանդակած զարդերը. ահա խաղողի վողկույզներն ու տերևներն են իրար յետևից հաջորդաբար շարված, մի ուրիշ տեղ—ուրիշ բույսերի տերևներ, ծաղիկներ. ահա և մեծ ծաղիկի պսակը, ահա և քանդակագործի յերևակայութեան արդյունք—գեղեցիկ և նուրբ քանդակած յերևակայական տերևներ: Յերախները բաց՝ առյուծները գլուխներն են դուրս ցցվել և նայում քեզ:

Տաճարի հիմքի վրա տեղ-տեղ մնացել են սյուների մնացորդները. ճարտարագետներին զբոսավար չեր վորոշելու, թե ի՞նչ վոճով էր կոտուցված տաճարը: Բեկորներն այնքան շատ են, վոր նույնիսկ հնարավորութիւնն կա, թերևս մա-

սամբ վերականգնել տաճարի շենքը: Ճարտարագետները ուսումնասիրությունները ճշտում են, վոր մեր առաջ հռոմեական տիպի տաճար ե:

Տաճարի մուտքը հյուսիսային կողմից եր, տաճարի համարյա ամբողջ լայնությամբ բարձր աստիճանները յերկու կողքերից ունեն պատեր: ամեն մի պատի առջևի յերեսին բարեկցիֆներ են:

Տաճարի ծածկը նստած եր սյունաշարքի վրա, այդպես ե յերևում բարձրադիր հիմքի վրա յեղած սյուների մնացորդներից, նրանց պատվորությունից: Ծածքն առջևից և յետևից (հյուսիսից և հարավից) ուներ շքեղ ֆրոնտոններ, վորոնց բեկորները նույնպես ընկած եյին հիմքի մոտ:

Մեզ շատ հետաքրքրեց պատերի շարվածքը: Հիմքը շատ բարձր եր, բազալտից եր, խիճից և այդ բոլորը միացած եր ամուր շաղախով — բետոնով: Պատերի արանքներին ճեղքեր եյին, շաղախ չեր յեևում. պատերի հսկա քարերը շարված եյին առանց շաղախի, բայց միացած եյին յերկաթե կապերով. տեղ-տեղ նկատեցինք յերկու քարերի միջև ձգված՝ քարերը միացնող յերկաթե բևեռները:

Հնագետի զրույցից մենք իմացանք, թե ինչպես եյին իրար վրա, իրար կողքի շարվել հրա-

կայական քարերը: Տաճարը կառուցելիս հին շինարարները կիրառում եյին յեգիպտական ձևը, այսպես եյին անում . պատի ամբողջ տարածությամբ շարվում եյին ավազով լի պատկեր: Քարերը քաշելով, վեր հրելով բերում շարում եյին պատերի վրա. ապա քարերի տակի պակերը պատում եյին, ավազը դուրս եր գալիս, քարերն իջնում եյին նշանակված տեղը: Հասարակ բայց հետաքրքիր տեխնիկա յեր կիրառված ծանր քարերը բարձրացնելու և շարելու համար: Բայց վորքան ծանր աշխատանք եր թափված բազալտի և տուֆի հսկայական քարերն այստեղ բերելու համար: Այդ բոլորը պետք ե բերվեր ձորից, ուր տեղ-տեղ բազալտի սյունաձև բացվածքներ կային:

Հենց բերդաքաղաքի տակ, գետի ձորի կողմում, վերևից ներքև, մինչև լայն առվակը ձգված ե բազալտե ապոնոմոնների սյունաշարքը: Արժե իջնել, ներքև: Դեպի առվակը կա հարմար ճանապարհ հյուսիս-արևելյան կողմից. իսկ ավելի կարճ ուղին, հենց անմիջապես վերևից ե, ձախ կողմից՝ նեղ —, քարքարոտ կածանով իջնելն ե: Առվակին հասնելուն պես, պիտի անցնել նրա մյուս ափը, ապա առաջ գնալ մինչև բազալտե բարձրաբերձ սյունաշարքը: Կանգ առանք այնտեղ, վորտեղ բազալտը պատի միջից մի

քանի տեղից առատաշուր աղբյուրներ ելին դուրս ժայթքում: Մաքուր, սառը և համեղ ջուր էր: Յերբ ներքևից նայում ելիր վերև, թվում էր, թե շատ հեշտ էր տեղ-տեղ քանդված բազալտը դուրս ցցված կտորներով զեպի վեր բարձրանալ: Տուրխատներից մեկը ցանկացավ կարճ ժամանակում բարձրանալ վերև. բազալտե աստիճանները նրան շատ մատչելի թվացին: Սկսեց բարձրանալ, սկզբում բավական արագ, այժի նման էր մագլցում: Բայց հասնելով մինչև կես ճանապարհը, նրա տրամադրությունը հանկարծ ընկավ վերև բարձրանալու հնար չկար, սակայն իջնելն էլ արդեն վտանգավոր դարձավ: Բազալտը դուրս ցցված քառակուսի կտորներն այնքան էլ հաստատուն չեղին, բազմաթիվ ձեղքվածքներ կային: Լեռնային տուրխատական արշավների ժամանակ այսպիսի անակնկալներ միշտ կարող են լինել. չերբեք չպիտի մոռանալ վերցնել զիմացկուն, չերկար պարան: Մեր տուրխատին փրկեց պարանը. անմիջապես վերևից պարան գցվեց և նրան վեր բարձրացրին:

Գառնիում պիտի մնալ առնվազն մեկ չերկու որ. նրա շրջակայքում, մանավանդ զետի ձորի ուղղությամբ, եքսկուրսիաներ կազմակերպելու համար: Գյուղի շրջապատը, բնությունը շատ զեղեցիկ էր, ինչքան տպավորիչ կլինեք,

յեթե այս զեղեցիկ շրջապատում բարեկարգված տնակներ, ծառ տնկած բակեր լինելին, փողոցներն էլ ծառուղիներով զարդարված: Իհարկե գյուղում բուսականութուն կար, բայց վոչ այնքան, ինչքան հարկավոր էր և կարելի չէր ունենալ:


Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Գառնիից դուրս յեկանք առավոտյան ժամը 7-ին: Ծրագրված էր հետևյալ մարշրուտը. Գառնի Քյարփիչլու, Ոխչաբերդ, Զրվեժ, Նորք, Յերեվան: Սայլի և ավտոյի համար հարմար ձանապարհ էր: Տեղ-տեղ միայն ճանապարհը զառիվեր էր, որինակ, չերբ մոտենում ելինք Քյարփիչլույին, բայց ընդհանրապես հարթ վայրերով ելինք գնում.

Մինչև Քյարփիչլու մեզ գրավում էր դաշտային հարուստ բուսականությունը: Այս կողմերի հողը լավն էր չերևում: Մեր հողագետը իր գերի մեջ մտնելով պատմեց մեզ տվյալ վայրի հողային պայմանների մասին: Հողի կազմությունն լավ պատկերացնելու համար փոս փորվեց, նմուշներ վերցնելու համար:

Բոլոր տեսած ծաղիկների մեջ անմոռանալի տպավորութուն թողեց խոշոր Հիրիկը: Մենք գնում ելինք զառիվեր ճանապարհով բարձունք-

ներով: Բարձունքներից մեկի հարավային լանջին հեռվից արդեն տեսանք Հիրիկի մի քանի ծաղիկներ. բոլորն ել լաջն բացել ելին իրանց դեղնավուն պսակը: Ինչխոսք, վոր անմիջապես թիակներով նրանց դուրս հանեցինք հողից: Շատերն ելին ցանկանում ունենալ այդ ծաղիկից, բայց քիչ եր: Յերբ առաջ շարժվեցինք, հաճախ մի քանի հողի շեղվում ելին ճանապարհից և



Հիրիկ:

բարձունքների լանջերը հետազոտում: Շատ շուտ մի այնպիսի ծաղկավետ լանջ բացվեց մեր առաջ, վոր նորից զգացինք, թե ինչ անփութութուն եր մեր կողմից ֆոտոապարատ չվերցնե-

լը: Իսկ չեթե մեզ հետ նկարիչ լիներ, նա չեր հեռանա այստեղից մինչև վոր Հիրիկների լանջը չհավերժացներ իր ճամբորդական ալբոմում:

Հիրիկը—բաց դեղնավուն, սպիտակավուն խոշոր և անկանոն ծաղիկ եր: Խումբ—խումբ նրանք նստած ելին քարքարոտ հողի մեջ: Շատերն արդեն բացված ելին լրիվ, կալին կիսով չափ բացված, քիչ չեյին դեռ ևս կոկոնների մեջ ծալված ծաղիկներ: Կարելի չեր մի շատ լավ հավաքածու կազմել սկսած փոքր կոկոնից, մինչև լրիվ բացվածը: Կինոբրիգադան աարբեր որինակներ նկարահանելով հետագայում պատրաստեց մի նկար, վորի վրա տեսնում ելիր, Հիրիկի աստիճանական բացվելը: Հիրիկներով զարդարված լանջեր հանդիպեցինք միայն յերկու լերեք տեղ:

Ժողովրդական բժշկականության մեջ Հիրիկը վաղուց է ծանոթ: Նրա ստորջերկրյա մասերից պատրաստում են ուժեղ լուծողական, միզաթորման միջոցներ: Նրա թարմ հյութերը զործածվում են զոլոտուխայի դեմ, ջրվախության, վորոշ մաշկային հիվանդութունների դեմ:

Բոլորս ել բեռնավորվեցինք Հիրիկի փնջերով: Նրա պսակաթերթիկներն այնքան նուրբ ելին, վոր շատ քչերը դիմացան և անվսաս հասան մինչև Յերեվան:

Հասանք Գյարփիչլու: Հանդիստ ունեցանք: Աղբյուրն այնպիսի տեղ եր, վոր նրա մոտը նստելու հնարավորութիւն չկար: Իջանք ներքև, նստեցինք կանաչների մեջ: Փոքրիկ գլուղն ամբողջովին մեր առաջն եր: Մեր չոր սննդի պաշարը թարմացրինք վոչխարի լավ մածուկով:

Մեր հանգիստը կարճատև եր:

Մյուս գլուղը՝ վորով անցանք, Ոխչաբերդն եր: Սյա վայրը մեծ հետաքրքրութիւնն է ներկայացնում լերկրաբան—տուրիստի համար: Գլուղից քիչ վերև լերևում եր լեռնաշերտերի այն բացվածքը, վորտեղ գտել են և ելի կարելի չե գտնել բրածոներ: Ոխչաբերդում հայտնաբերած են նույնիսկ կորալների բրածոներ. կորալները (մարջանը) ծովային կենդանիներ են, հետևաբար այս կողմերում վաղեմի անցյալում լեղել է ծով, վորի հատակին գոյացել են այն նստվածքային լեռնատեսակները, վորոնց մեջ մեծ քանակութեամբ հայտնաբերվել և հայտնաբերվում են ծովային կենդանիների բրածոներ:

Մենք ժամանակ չունեցինք պտտելու Ոխչաբերդի շրջակայքը: Տուրիստներից շատերն արդեն շտապում ելին Յերեվան: Ոխչաբերդին ամենապակասը հարկավոր եր մեկ ժամ տրամադրել. լերկրաբան տուրիստն անպայման պետք է գնա բրածոների վայրը:

Վորքան մոտենում ելինք Յերևանին, անկատելի կերպով մեր քայլածքն ավելի արագանում եր:

Ահա և Ջրվեժ գլուղը: Գյարփիչլուից մինչև Ջրվեժ հանդիստ չեցինք ունեցել: Աղբյուրը ճանապարհից հեռու չեր: Ձեյինք ուզում հեռանալ ճանապարհից: Իջևանելու հարմար տեղ չկար: Մտանք մի գլուղացու այդի. անխնամ վիճակումն եր նա. նստեցինք կանաչ խոտի վրա: Տնտեսվարը բաժանեց վերջին սննդապաշարը: Մեր արագ լերթը Գառնիից մինչև Ջրվեժ անցավ առանց արկածների: Տուրիստներն արդարացրին իրանց կոչումը, մանավանդ Տուրիստ—կանայք:

Ջրվեժից մինչև Յերիվան անհետաքրքիր, փոշոտ ճանապարհ եր: Միայն Նորք հասնելով, նրա այգիների մեջ գովութիւնն զգացինք:

Հասանք Յերեվան ժամը 4-ին:

Գառնի-Գեղարդը պետք է գրավեն ամեն մի տուրիստի: Կարելի չե գնալ Գեղարդ և ավտոյով, սայլով Գողթ (վերին) գլուղի մոտով:

Փոքրաթիվ տուրիստական արշավախմբերն Գառնի հասնելով, պետք է ընտրեն ամենափրկչի վրայով անցնող մարշրուտը, մինչև ներքին Գողթ գլուղի մոտ Գեղարդ գետի վրայի կա-

մուրջը: Անցնել կամըջով: Լավ ու լայն ճանապարհով շատ շուտ կհասնեն Գեղարդ:

Տոկուն, առողջ, չշտապող տուրիստի համար հետաքրքիր կլինի այն մարշրուտը, վոր տանում է դեպի Ալի—Մարդանլի գյուղը, այդտեղից իջնել մինչև գետափ: Հարկավոր է զգուշություն և դիմացկուն կոշիկ, գետի վրա կամուրջ չկա, ուրեմն պիտի անցնեն ջրով:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մ Ա Ր Շ Ր Ո Ւ Տ Ն Ե Ր

Մեր սքեմայի վրա նշված են այն մարշրուտները, վոր կարելի յե առաջարկել տուրիստին: Գծանկարի վրա մասշտաբը պահպանված չէ, սքեմատիկ գծվածք ե:

Մարբուս 1. Յերևան-Գառնի. այս ուղղությամբ՝ Յերևան-Թոխմախան գյուղի մոտով Շորբուլախ-Ավդալյար-Կուրբաղու-Գառնի:

Մարբուս 2. Գառնի-Գեղարդ. ուղղությունը Գառնի-Գեղարդ գետի կամըջով անցնել-Ամենափրկչի ավերակներ—նեքքին Գողթ գյուղի (հակառակ ավինն) ուղղությամբ իջնել գետափ, անցնել կամըջով Գողթ-Գեղարդ:

Մարբուս 3. Գառնի-Գեղարդ: Ինչպես Մարշրուտ 2-ը, բայց ավելի դժվար, կարիք կլինի գետով անցնել: Գալով Ամենափրկչի ավերակները, ապա գնալ Ալի-Մարդունլի գյուղ—այնտեղից իջնել գետափ, անցնել գետով—Գեղարդ:

Վերադարձի մարբուսներ

Մարբուս 4. Գեղարդ-Գառնի: Գեղարդ-վերին Գողթ-Գառնի: Հեշտ մարշրուտ է, մատչելի ամեն մի տուրիստի համար, ավտոյի, սայլի, հեծանիվորդի համար:

Մարտոս 5. Գառնի-Յերևան: Գառնի-Ֆյարփիչլու-Ոխչաբերդ-Ջրվեժ-Նորք-Յերևան: Հեշտ մարշրուտ, մատչելի ամեն տեսակի տրանսպորտի համար:

Միևնույն մարշրուտներով կարելի յե գնալ և հակառակ ուղղությամբ, Գերադասելի յե ծանր ճանապարհով գնալ, քանի ուժերը թարմ են, վերադառնալ ավելի հեշտ ճանապարհով:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԻՑ

Մեր անցած մարշրուտներով հավաքված են. 1000 որինակ բազմատեսակ միջատներ, վորոնցից մի քանիսը նոր տեսակներ են:

17 հտ. մողեսներ, մեկը՝ խոշոր Ագաման.

6 հտ. ոձ.

5 հտ. յերկկենցաղներից (գորտեր).

7 հտ. կարիճ.

13 հտ. բազմոտանիներ.

10 հտ. խեցգետինանմաններ:

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Հավաքված են 200 թերթ բույսեր, վորոնց թվում կան մեղրատու, ներկատու բույսեր, դեղաբույսեր, ժողովրդական բժշկականության մեջ գործածվող բույսեր թվենք մի քանի որինակներ.

Nepeta Nawaschini-կատվի անանուխ մեղրատու ժողովրդ. բժշկ:

Galium articulatum. Knryk. արոտաբույս, դեղաբույս. (լյարդի հիվ., գոլոտուխայի, ջրգողության, մաշկի հիվ. դեմ), արմատից — կարմիր ներկ:

36.	12. վ	վերացվեց	վերածվեց
36.	1. ն	հողմանարմա	հողմանարված
37.	1. ն	Գեղարդ՝	Գեղարդ
38.	4. վ	լինելուն	լինելուց
38.	9. վ	տեմբով	տեմպով
40.	9. ն	թափթված	թափթված
41.	6. ն	ցցվել	ցցել
42.	7. վ	պատեր	պատեր.
42.	7. ն	յեկում	յեկում
49.	11. ն	Յերվան	Յերևան
52.	6. վ	յերիզողի	յերիզողի

Thymus Kotshyanus. Ուրց. (тимьян, богородская трава) դեղաբույս, մեղրատու:

Astragalus aureus. Կրնի փուռ, խաղիբրան. փշոտ տունկ, մեղրատու:

Vervascum phlomodios. ադեհատիկ (Коровяк). ժողով. բժշկ. արմատ—յերբղղի դեմ. թարմ կանաչի հոտ մկնեբրին փախցնող.

Gundelia Tournefortii. դեղաբույս. խեժը—փսխման միջոց:

Artemisia erivanca. Ոշինդր. դեղաբույս.

Centaurea Balsamita. Տերեփուկ (Василек) դեղաբույս. ծաղիկ. միզաբեր. ժողովրդ. միջոց կարծիքի և ուր. կենդ. թույնի դեմ:

Kachie prastrata. մոխրից ստանում են սողա:

Zinum austriacum. վայրի կտավհատ.

Viburnum lautana. ճյուղերից պատրաստում են չուբուխներ, ձեռնափայտ, զամբյուղներ:

Ornitogalum umbellatum. Աստղաշուշան. կոճղեղ. ժողովրդ. բժշկ. միջոց:

Stachys Covaudulifolia. Յեղախոտ. մեղրատու.

Scutellaria orientalis ժալալ. ժողով. բժշկ:

Peganum Harmala. Սպանդ. դեղաբույս. սերմ. քրտնաբեր, միզաբեր, վորդաբեր: Սերմերից հաղմալից ներկ:

Scleranthus anuus. Կարծրածաղիկ. ժող. բժշկ. Արմասների վրա լինում է միջատ Coccus polonicus, վորից ստանում են կարմիր ներկ:

Onosma echioides. Իշահոտոտ. (бабьи румяна) արմատից—կարմիր ներկ:

Salvia dracacephaloides. Յեղեպակ. մեղրատու:

Scrophularia orientalis. Խլածաղիկ. դեղաբույս. փսխմ. թողացնող: ժող. ժբ. մեծ քանակութեամբ գործածել—թունավոր է ազդում:

Reseda lutea. նազ. դեղաբույս. արմատ, տերև-միզաբեր, քրտնաբեր. մեղրատու. ներկատու:

Phelipea caccinea. Լերկածաղիկ. պարագիտ բույս, հնում—ակնաբու. միջոց. (Տես՝ տեքստը):

Iris. Հիրիկ. դեղաբույս. (տես՝ տեքստը):

Բացի սրանցից գտնված են շատ ուրիշ դեղաբույսեր, մեղրաբույսեր և այլն:

Տուրիստական արշավին մասնակցել եր Հայաստանի Բնագիտական թանգարանից Տ. Իզմայլովը (կենդանաբան):

Կենդանաբանական և բուսաբանական նյութերը հավաքվել են վերոհիշյալ թանգարանի համար:

Վերը նշած բույսերի լատինական անունները վորոշել է բուսաբան Տ. Տախտալյանը (թանգարանի բուսաբ. բաժնի գիտ. աշխատավ.) հայերեն անունները և համառոտ նկարագրերը վերցրած են հետևյալ գրքից.

А. X. Раллов. Дикорастущие растения Кавказа, свойства и применение их. 1907 թ. թիֆլիս: (Չափազանց հետաքրքիր գիրք ամեն մի բուսասեր տուրիստի համար: Իհարկե բուսական ձևերը լրիվ չեն տված):



4052

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.



Ր. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Կ ԳԱՐՆԻ-ԳԵԳԱՐՏՄ
Գիւ ՏՏՐ Արմենի, Զրիւան

« Ազգային գրադարան »



NL0301656

8701